

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2015 թվականին շարունակվել են կրթության ոլորտի արդիականացման աշխատանքները՝ հիմք ընդունելով կրթության զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները:

Մարզում գործում են 168 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնցից 151-ը՝ Շիրակի մարզպետարանի, 17-ը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության:

Կրթության որակը և մատչելիությունը բարձրացնելու նպատակով 2015 թվականին ձեռնարկվել են որոշակի քայլեր. ընդլայնվել է նախադպրոցական կրթության հասանելիությունը մարզի գյուղական համայնքներում, ապահովվել է ուսումնական հաստատությունների վարչական աշխատողների և ուսուցիչների վերապատրաստումների իրականացումը՝ մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը համաքայլ ընթանալու և պարտադիր ատեստավորման նպատակով, շարունակվել է ուսուցիչների որակավորման տարակարգի շնորհման գործընթացը /2015 թվականին որակավորման առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել մարզի 23 մանկավարժների/: Շարունակվել են ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի համալրման, նորագույն տեխնոլոգիաների ներդրման, ինտերնետի ամբողջական և որակյալ ծածկույթի ապահովմանն ուղղված աշխատանքները, գյուղական համայնքների դպրոցահասակ երեխաների երթևեկության կազմակերպումը:

2015 թվականին մարզի հանրակրթական դպրոցների շուրջ 3000 աշակերտներ մասնակցեցին հանրապետական առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին: Ընդհանուր առմամբ օլիմպիադաների հանրապետական փուլերում մեր մարզի աշակերտները արժանացել են 7՝ 1-ին, 24՝ 2-րդ և 18՝ 3-րդ կարգի դիպլոմների, 46 աշակերտներ արժանացել են գովասանագրերի: Իսկ մարզային փուլում բարձր արդյունքներ գրանցած, սակայն հանրապետական փուլից դուրս մնացած 51 աշակերտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից ստացել են դիպլոմներ և խրախուսական պարգևներ: Աշակերտներին օլիմպիադաներին լավագույնս նախապատրաստելու համար պարգևատրվել են նաև մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների 8 ուսուցիչներ:

2014-2015 ուսումնական տարում Շիրակի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության հիմնական աստիճանն /9-րդ դասարան/ ավարտել են 878 աշակերտներ, որոնց զգալի մասը /62.4 %/ ուսումը շարունակել է նույն դպրոցում, իսկ մյուսները շարունակել են ուսումը ավագ դպրոցներում՝ 12.9 %, վարժարաններում՝ 8.9 %, ուսումնարաններում՝ 15.1%:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար 2015 թվականին մարզի ուսումնական հաստատություններում շարունակվել են համապատասխան կենսագործունեության միջավայրի, անհրաժեշտ պայմանների ստեղծման և մասնագիտացված մանկավարժական համակազմի ստեղծման աշխատանքները, 3-ով ավելացել է ներառական կրթություն իրականացնող դպրոցների քանակը՝ /Գյումրու N9 հիմնական, Արթիկի N2 հիմնական, Ազատանի միջնակարգ դպրոցներ/ 12-ից հասնելով 15-ի: Այս ուղղությամբ ընդհանուր թվով 772 աշակերտի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվել է 332.660.5 հազ. դրամ:

Ներառական կրթության իրականացման հետ մեկտեղ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն են իրականացնում մարզի երկու հատուկ դպրոցները: Այդ դպրոցներում ընդգրկված են առողջական տարբեր խնդիրներ ունեցող 118 երեխաներ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականին ընդունված որոշումը «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը»-ի մասին՝ Կրթության որակ և համապատասխանություն ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ 2015 թվականին շարունակվեց «Օգնություն նախադպրոցական տարիքի երեխաներին» ծրագրի իրականացումը: Ծրագրի շրջանակներում այսօր մարզի պետական հանրակրթական դպրոցներից 54-ում գործում են նախակրթարաններ, որտեղ հաճախում է 904 երեխա: 2015 թվականին պետական բյուջեից նշված ծրագրով հաստատություններին հատկացվել է 103.165.8 հազ. դրամ: Մարզում գործում են նաև 54 համայնքային մանկապատեզներ, որտեղ հաճախում են 4770 երեխաներ:

2015 թվականի ամռան ընթացքում մարզի հանրակրթական դպրոցներում սովորող սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների 7-14 տարեկան 530 երեխաներ

3 հերթափոխով իրենց ամառային հանգիստն են անցկացրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավանի «Արագած» ճամբարում:

2015 թվականի առաջին կիսամյակում անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել մանկավարժների համար կազմակերպված վերապատրաստումների անցկացման աշխատանքներին: Որակյալ և պահանջված կրթական ծառայություններ մատուցելու նպատակով իրականացվել է 530 ուսուցչի մասնագիտական առարկայական նախաատեստացիոն վերապատրաստում և նրանցից 416-ը ատեստավորվել են:

2015 թվականին մարզի համայնքների ղեկավարների և հանրակրթական դպրոցների կողմից համակարգվել և վերահսկվել են դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, վերահսկվել և հաշվառվել դպրոցից-դպրոց տեղափոխվող և սվյալ կրթական մակարդակը կամ դպրոցն ավարտող աշակերտների շարժը:

Մարզի դպրոցահասակ տարիքի սակավաթիվ երեխաներ ունեցող և միայն տարրական կամ հիմնական կրթության աստիճան ապահովող գյուղական համայնքների դպրոցներում սովորող երեխաների միջնակարգ կրթության ապահովման նպատակով մարզում գործում է աշակերտների համայնքից համայնք երթևեկության կազմակերպման ծրագիրը, որի շրջանակներում 2015 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներով կազմակերպվել է թվով 11 համայնքների միջին հաշվով 125 երեխաների տեղափոխումը: Այդ նպատակով 2015 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից մարզի համապատասխան ուսումնական հաստատություններին հատկացվել է 10.865.0 հազ. դրամ:

Մարզի հանրակրթական դպրոցների շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով 2015 թվականին մեկնարկել է Վարդաքարի միջնակարգ դպրոցի շենքի կառուցումը: Արդեն ավարտվել են Ջրափիի միջնակարգ դպրոցի ճաշարանի, Գեղանիստի միջնակարգ դպրոցի կտուրի, Մայիսյանի միջնակարգ և Գյումրու N7 հիմնական դպրոցների ջեռուցման համակարգերի վերանորոգման աշխատանքները:

Հանրակրթության ոլորտի զարգացման կարևոր բաղադրիչներից է ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրումը և որակյալ ինտերնետային կապով համալրումը: Շարունակվում է համագործակցությունը

«Dasaran.am» կրթական ծրագրի հետ, որի շրջանակներում մեկնարկել է «Նոր սերնդի դպրոց 2015-2016» համապետական մրցույթը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ